




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

ՀՀ Արարատի մարզի «Մասիսի պետական գյուղատնտեսական
քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման



Երևան 2020

«ՄԱՍԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈԼԵԶ» ՊՈԱԿ-Ի ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ
ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի 3-րդ թաղ. Հերացու փողոցի թիվ 21 հասցե

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ

ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՅՏ

«ԵՐԵՎԱՆՆԱԽԱԳԻԾ» ՓԲԸ ՏՆՕՐԵՆ՝

Ս. ՕՀԱՆՅԱՆ

Ա/Ձ ԱՐԱՄ ԳԱԼՈՅԱՆ



Երևան 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1.	ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	4
1.1	Ձեռնարկողի մասին տեղեկություն	4
1.3	Հապավումներ	4
1.4	Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը	5
1.5	Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)	7
1.5.1	Նախատեսվող գործունեության նկարագիր	7
1.5.2	Նախատեսվող աշխատանքների կազմակերպում	10
1.5.3	Նախատեսվող գործունեության տարածքի իրավիճակային հատակագիծ	12
1.5.4	Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց	16
1.5.5	Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ	17
1.5.6	Նյութերի և բնառեսուրսների օգտագործում	17
1.5.7	Ջրամատակարարում և կոյուղի	18
1.5.8	Էլ. մատակարարում	20
1.5.9	Գազամատակարարում	20
1.5.10	Ջեռուցում և օդափոխություն	20
2.	ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ	21
2.1	Դիտարկվող տարածքային ֆիզիկա-աշխարհագրական դիրքը	21
2.2	Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները	21
2.3	Տարածաշրջանի հողերի նկարագիրը	24
2.4	Կլիման և օդերևութաբանական պայմանները	25
2.5	Օդային ավազան	28
2.6	Բուսական և կենդանական աշխարհը	28
2.6.1	Բուսական աշխարհը	29
2.6.2	Կենդանական աշխարհ	29
2.6.3	Պատմամշակութային հուշարձաններ	30
2.7	Թափոնների կառավարում	31
3.	ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	31
3.1	Ռիսկերի գնահատում	32
3.2	Արտանետումների աղբյուրները	32
3.3	Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն	32
3.3.1	Մթնոլորտային օդ	32
3.3.2	Ջրային ռեսուրսներ	33
3.3.3	Հողային ռեսուրսներ	33
3.3.4	Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը	33
3.3.5	Հակահրդեհային միջոցառումներ	34
3.3.6	Աղմուկ և թրթռում	35
3.3.7	Թափոնների կառավարում	35
3.3.8	Տարածքի բարեկարգում	36
4.	ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ	36
	ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՅՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ	37
	ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ	40
	ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	37
	ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ	38

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1.1 Ձեռնարկողի մասին տեղեկություն

1.2 Ձեռնարկող՝ «Երևաննախագիծ» ՓԲԸ

1.3 Ձեռնարկողի իրավաբանական հասցեն՝ Ք. Երևան Բյուզանդ 1/3

1.5 Նախատեսվող գործունեության հասցեն՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս
Մխիթար Հերացու փող., 21 շենք

1.6 Հեռախոս՝ +374-10-562711

1.7 Աշխատանքային նախագծի մշակող՝

1.3 Հապավումներ

ՀՀ՝ Հայաստանի Հանրապետություն

ՓԲԸ՝ Փակ Բաժնետիրական Ընկերություն

ՍՊԸ՝ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՊՈԱԿ՝ պետական ոչ առևտրային կազմակերպություն

1.4 Նախատեսվող գործունեության նպատակը և հիմնավորումը

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը: Գործունեության բնապահպանական գնահատումը պետք է ներառի ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք հանդիսանա դրանց կանխարգելման կամ հնարավոր նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

Գործունեության նպատակն է իրականացնել ՀՀ Արարատի մարզի «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավումն:

Արարատի մարզի «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման աշխատանքային նախագիծը իրականացված է ՀՀ-ում գործող նորմատիվ փատաթղթերի պահանջներին համապատասխան:

2014թ.-ի հունիսի 21-ի "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն նախատեսվող գործունեությունը հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ և ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության:

«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման աշխատանքային նախագծի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտը մշակված է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքի և բնապահպանական ոլորտի այլ նորմատիվատեխնիկական ակտերի պահանջներին համաձայն:

Բնապահպանական ազդեցության գնահատման այս զեկույցը նկարագրում է գործունեության ենթակա տարածքի բնապահպանական ելակետային պայմանները, գործունեության իրականացման համար նախատեսվող աշխատանքները և գործողությունները, գործունեության իրականացման արդյունքում բնապահպանական հնարավոր ազդեցության շրջանակը և գնահատականը: Բնապահպանական ազդեցության գնահատումը պատրաստվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Սկսած 1991թ. շրջակա միջավայրի պահպանությանն առնչվող ավելի քան 25 օրենսգրքեր և օրենքներ, բազմաթիվ ենթաօրենսդրական ակտեր և կանոնակարգեր են ընդունվել:

Շրջակա միջավայրի պահպանության հարցերին առնչվող ՀՀ օրենքների ցանկը ներկայացված է ստորև.

- Բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին (1992),
- Մթնոլորտային օդի պահպանության մասին (1994),
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին (2014),

- Պատմական և մշակութային անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին (1998),
 - Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին (2006),
 - Բուսական աշխարհի մասին (1999),
 - Կենդանական աշխարհի մասին (2000),
 - ՀՀ հողային օրենսգիրք (2001),
 - ՀՀ հարկային օրենսգիրք (ՀՕ-165-Ն, 01.01.2018թ.)
 - «ՀՀ բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 14.08.2008 N 967-Ն որոշում
 - Բնապահպանական կրթության մասին (2001),
 - ՀՀ ջրային օրենսգիրք (2002),
 - ՀՀ ընդերքի մասին օրենսգիրք (2011),
 - Թափոնների մասին (2004),
 - Բնապահպանական մոնիտորինգի մասին (2005),
 - Բնապահպանական վերահսկողության մասին» (2005),
 - Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին (2006),
 - ՀՀ անտառային օրենսգիրք (2005),
 - ՀՀ Կառավարության <<ՀՀ կենդանիների Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 71-Ն որոշում,
 - ՀՀ Կառավարության <<ՀՀ բույսերի Կարմիր գրքը հաստատելու մասին>> 29.01.2010թ. N 72-Ն որոշում,
 - <<Սևան>> ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի (հողերի օգտագործման սխեմայի) հաստատման մասին>> ՀՀ Կառավարության 18.01.2007թ. N 205-Ն որոշում
 - Հրաման N2-III-11.3 «Աղմուկն աշխատատեղերում, բնակելի և հասարակական շենքերում և բնակելի կառուցապատման տարածքներում» սանիտարական նորմերը հաստատելու մասին: Ուժի մեջ է մտել 13.04.2002թ:
- Հաշվի են առնվել նաև՝
- ՀՀ կառավարության 2014թ. սեպտեմբերի 25 որոշումը «ՀՀ բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության եվ օգտագործման բնագավառում պետական ծրագիրը եվ միջոցառումները հաստատելու մասին»
 - ՀՀ կառավարության 2015 թ. դեկտեմբերի 10-ի նիստի «ՀՀ կենսաբանական բազմազանության պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման բնագավառներում ռազմավարությանը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N54 որոշում
 - ՀՀ կառավարության 2015թ. մայիսի 27-ի նիստի «ՀՀ անապատացման դեմ պայքարի ռազմավարությունը և գործողությունների ազգային ծրագրին հավանություն տալու մասին» N23 արձանագրային որոշումը:

1.5 Նախատեսվող գործունեության բնութագիրը (արտադրական հզորություններ, օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ)

1.5.1 Նախատեսվող գործունեության նկարագիր

ՀՀ Արարատի մարզի «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներն իրականացվել են համաձայն.

- N ՀՀՔԿ-ԳՀԱՇՁԲ-19/24 առ 03.10.2019թ. պայմանագրի,
 - Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի ղեկավարի կողմից տրված N94 առ 16.09.2019թ. նախագծման թույլտվության (ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի),
 - Իրավունքի պետական գրանցման վկայական N21072016-03-0020:
 - Կադաստրային ծածկագիր՝ 03-003-072-001
 - Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
 - Օգտագործման նպատակը՝ հասարակական կառուցապատման
- Նախագծի պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե:

Քոլեջը տեղակայված է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի 3-րդ թաղ. Հերացու փողոցի թիվ 21 հասցեում:

Քոլեջ հաճախող աշակարտների փաստացի թիվը շուրջ 370 է:

Հողամասի մակերեսը 3.383 հա, ունի հարթ ռելեֆ: Հողամասը գտնվում է հասարակական կառուցապատման գոտում, ամբողջովին կառուցապատված է և կանաչապատված:

Ըստ ակնադիտական ուսումնասիրությունների՝ համալիրի մասնաշենքերը չեն բավարարում հանրակրթական հաստատությունների նկատմամբ ՀՀ-ում սահմանված նորմատիվ պահանջներին և հետագա շահագործման համար հարկավոր է դրանք վերակառուցել:

Համալիրը բաղկացած է 3 հիմնական մասնաշենքերից, և օժանդակ շինություններից, որից.

1-ին ուսումնական մասնաշենք (կից մարզադահլիճի մասնաշենքով) կառույցը երկհարկանի է, կոնստրուկտիվ լուծումները՝ ե/բ ժապավենային հիմքերով, քարե կրող կոնստրուկցիաներով, միջհարկային ծածկերն ու վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր է, փայտե ծպեղնային համակարգով ցինկապատ պողպատե պրոֆիլացված ծածկույթով /15 տարի առաջ փոխարինվել է/, կազմակերպված ջրահեռացմամբ:

2-րդ ուսումնական մասնաշենք, կառույցը երկհարկանի է, կոնստրուկտիվ լուծումները՝ ե/բ ժապավենային հիմքերով, քարե կրող կոնստրուկցիաներով, միջհարկային ծածկերն ու վերնածածկը հավաքովի ե/բ կլորանցքավոր սալերից, տանիքը լանջավոր է, փայտե ծպեղնային համակարգով ցինկապատ պողպատե պրոֆիլացված ծածկույթով, կազմակերպված ջրահեռացմամբ:

Ճաշարանի մասնաշենք, կառույցը միահարկ է, կոնստրուկտիվ լուծումները՝ ե/բ ժապավենային հիմքերով, քարե կրող կոնստրուկցիաներով, ծածկը՝ ե/բ սալերով, **Պահակատուն**, կառույցը միահարկ է,

Ենթակայան, կառույցը միահարկ է /տրանսֆորմատորներ 2x160 կՎա ԼՏԵ, 1-ը անսարք/,
Ավտոտնակ, կառույցը միահարկ է,
Ավտովարման հրապարակ:

Կատարման ենթակա (նախատեսվող) աշխատանքների համառոտ բնութագիրը:

Կատարվել է.

- ուսումնասիրվել է համալիրի տարածքը և ձեռք բերել ինժեներական հետազոտության եզրակացություն, կատարող «ՄԵԼ ՀՈՎ» ՍՊԸ, պայմանագիր ՌԵՆ-ԻԵ 19/01 առ 10.10.2019թ.,

- գոյություն ունեցող բոլոր մասնաշենքերի և օժանդակ շինությունների տեխնիկական վիճակի ուսումնասիրության եզրակացությունների կազմում /կոնստրուկցիաներում բացումների, ամրանների և բետոնի ամրության լաբորատոր գործիքային հետազոտությունների միջոցով/, կատարող «Սեյսմոանվտանգություն» ՍՊԸ, պայմանագիր ՌԵՆ-SՀ-19/11 առ 07.11.2019թ.,

- իրականացվել են գեոդեզիական աշխատանքներ:

- Վերակառուցվող ուսումնական համալիրը նախատեսվել է մինչև 500 ուսանողի համար,

- նախագծով նախատեսվել է ներքին ինժեներական ենթակառուցվածքների /սառը և տաք ջրամատակարարման, կոյուղու, ջեռուցման, էլեկտրամատակարարման, գազամատակարարման, օդափոխության և օդորակման, հակահրդեհային ազդանշանման, հրդեհաշիջման, տեսահսկման, կապի, ջրահեռացման/ համակարգերի կառուցում, մասնաշենքի արդիական ներքին հարդարում,

- նախագծով նախատեսվել է հենաշարժային համակարգի խախտումներ և հաշմանդամություն ունեցող անձանց մատչելի տեղաշարժն ապահովող անհրաժեշտ նախագծային լուծումներով և սարք-սարքավորումներով (թեքահարթակներ, վերելակ, առանձնացված սանհանգույցներ, բազրիքներ, լրացուցիչ լուսավորություն,

- նախագծով նախատեսվել է տարածքի բարեկարգում, լուսավորություն, արտաքին խաղահրապարակի կառուցում, ըստ անհրաժեշտության կառուցվել-վերակառուցվել են արտաքին հաղորդակցողիները, նախատեսվել են ենթակայան, ըստ անհրաժեշտության և տեխնիկական պայմանների՝ ծրագրի շրջանակներում անհրաժեշտ տարածքի ընդգրկումով,

- համայնքին բնորոշ բնակլիմայական պայմանների հաշվառմամբ՝ նախատեսվել է այլընտրանքային էներգիայի օգտագործման հնարավոր միջոցներ (արևային ջրատաքացուցիչներ և ֆոտովոլտային պանելներ)՝ օբյեկտում տաք ջրամատակարարում և էլեկտրամատակարարում ապահովելու համար (առանձին նախահաշվով):

Նախագծման ընթացիկ աշխատանքները աշխատանքային կարգով համաձայնեցվել է պատվիրատուի հետ՝ միաժամանակ ապահովելով նորմատիվ պարտադիր պահանջները և օգտագործելով արդի մոտեցումներ:

Նախագծանախահաշվային փաստաթղթերը մշակվել է հետևյալ կազմով.

1. Գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքերի վերակառուցման աշխատանքների նախագիծ, նախատեսելով սեյսմազինվածության բարձրացման միջոցառումներ,

2.Գոյություն ունեցող ճաշարանային վթարային մասնաշենքի քանդման և լաբորատոր մասնաշենքի կառուցման նախագիծ,

3.Գոյություն ունեցող մարզադահլիճի վթարային մասնաշենքի քանդման և նոր մարզադահլիճի, հանդերձարանի, սանհանգույցների և հանդիսությունների դահլիճի մասնաշենքերի կառուցման նախագիծ /կից ուսումնական մասնաշենքին՝ /հաշվի առնելով գոյություն ունեցող մարզադահլիճի մասնաշենքի փոքր չափերը/,

4.Կաթսայատան կառուցման նախագիծ,

5.Ենթակայանի նոր մասնաշենքի նախագիծ,

6.Ջերմոցային տնտեսության կառույցի նախագիծ /500 քմ մակերեսով՝ 2 հատ 250 քմ/,

7.Չկնաբուծության լճակ /2 հատ 100 քմ/,

8.Ջրի ռեզերվուարներ /հրդեհաշիճման և պահուստային ջրամատակարարման/,

9. Գյուղտեխնիկայի պահպանման տարածք ծածկարանով /նախատեսված 4 տրակտորի համար/,

10. Գյուղտեխնիկա վարելու համար նախատեսված հրապարակ,

11. Բաց մարզահրապարակ,

12. Պահակակետ,

13. Պարսպապատում:

Նախագծման փուլերը:

Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնների ապահովում՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 11.09.2017թ N128-Ն հրամանի համաձայն՝ Նախագծային աշխատանքների իրականացում Աշխատանքային Նախագիծ՝ 1 (մեկ) փուլով:

Համաձայնեցումներ

Նախագծի համաձայնեցում

1. Համայնքի ղեկավարի,

2. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի,

3. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի,

4. ՀՀ առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի, ինչպես նաև ըստ անհրաժեշտության (համայնքի ղեկավարի կողմից տրամադրվող ճարտարապետա-հատակագծային առաջադրանքի և տարածքի գլխավոր հատակագծով սահմանված պահանջների, տեխնիկատնտեսական հիմնավորման, ինչպես նաև հնարավոր ազդեցության ենթակա տարածքի շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների ու դրանց օգտագործման նկարագրի առկայությամբ)՝ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության հետ:

Ոլորտի գլխավոր կարգադրիչ՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ:

Նախատեսվող գործունեությունը իրենից ներկայացնում է ժամանակակից լուծումներով և նյութերով իրականացվող շինություն: Այն ներդաշնակ է շրջակա կառույցներին տվյալ միջավայրում և չի հանդիսանում վիզուալ տեսադաշտի խոչնդոտ շրջակա բնակչության համար:

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ՝

- Տարածքի ընդհանուր մակերես՝ 33830քմ
- Քանդվող շինություններ՝ 1280քմ
- Վերակառուցվող շինություններ՝ 1970քմ
- Կառուցվող շինություններ՝ 2760քմ
- Կանաչ տարածք՝ 18661քմ
- Ճանապարհներ՝ 8867քմ
- Պարիսպ՝ 292քմ

1.5.2 Նախատեսվող աշխատանքների կազմակերպում

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների վերաբերյալ:

Բոլոր տիպի շին. մոնտաժային աշխատանքները պետք է կատարել պահպանելով շինարարական նորմաները, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվում են տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

Շին. հրապարակը կազմակերպելիս պետք է ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից տրված հրահանգների:

Շին. հրապարակը կոմպլեկտավորվում է հակահրդեհային ինվենտարով:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել միջոցառումներ զերծ պահելու շրջակա միջավայրը աղտոտումից, թունավոր արտաթորումներից:

Շինարարության ընթացքում անհրաժեշտ է կատարել տարածքով անցնող խմելու ջրի խողովակների անվտանգության ապահովմանն ուղղված միջոցառումներ:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

1©Աշխատանքների բնույթից ելնելով^a բանվորական բրիգադները ձևավորվում են որպես բազմապրոֆիլ կամ մասնագիտացված:

2©Բազմապրոֆիլ բրիգադները նպատակահարմար է կազմավորել խոշորացված (ընդհանրացված) տիպի ավարտուն շինարարական արտադրանքի՝ աշխատանքների ընդհանրացված փուլի՝ կոնստրուկտիվ հանգույցի ստեղծման նպատակով:

3©Բրիգադների քանակական և մասնագիտական - որակական կազմը սահմանվում է աշխատանքների ծրագրված ծավալների՝ աշխատատարության և աշխատանքների կատարման ժամկետների հիման վրա:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1©Բանվորների աշխատանքի պաշտպանությունը ապահովվելու է անհատական պաշտպանության միջոցների կիրառմամբ (հատուկ արտահագուստ՝ կոշիկ)՝ համալիր պաշտպանության միջոցառումների կատարումով (ցանկապատում՝ լուսավորում՝ օդափոխում՝ պաշտպանիչ և արգելակիչ սարքեր և հարմարանքներ և այլն)՝ սանիտարակենցաղային շինություններով և սարքավորումներով՝ գործող նորմերին և կատարվող աշխատանքների բնույթին համապատասխան

2©Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:




3©Աշխատանքի պաշտպանության՝ անվտանգության տեխնիկայի՝ արտադրական սանիտարահիգիենիկ միջոցառումների և հակահրդեհային անվտանգության վերաբերյալ անց է կացվելու հրահանգում: Շինմոնտաժային աշխատանքների կատարման ընթացքում պահպանվելու են շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

4.Բանվորների անվտանգության տեխնիկայի ուսուցման՝ հրահանգման ժամանակին և որակով անցկացման՝ անհատական պաշտպանական միջոցների վիճակի և կիրառման՝ արտադրական անվտանգության և արտադրական սանիտարահիգիենիկ անվտանգության հետ կապված բոլոր միջոցառումների կատարման հսկողությունը վերապահվում է աշխատանքներն իրականացնող կազմակերպությանը:

Անհրաժեշտ է ավելի հետևողական մշտադիտարկումներ իրականացնել շինարարական գործունեության ոլորտում՝ արձանագրելով շինհրապարակի որակի, բանվորական հագուստի կուլտուրայի, անվտանգության կանոնների հնարավոր անհամաչափությունները:

Իրականացվող շինարարական աշխատանքների ընթացքում կառուցապատողի կառաջնորդվի Առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն, իսկ շահագործման ժամանակ 2017 թվականի մարտի 28-ի թիվ 12-Ն հրամաններով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջներով:

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ







1.5.4 Շին. մոնտաժային աշխատանքների իրականացման ժամանակացույց

N Ը/Կ	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԵՌԱՄԱՅԱԿՆԵՐ								
		1	2	3	4	5	6	7	8	9
1	ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱԿԱՆ ՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—								
2	ՀՈՂԱՅԻՆ ԵՎ ՔԱՆԴՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	—			—		—	—		
3	ՄԻԱԶՈՒՅԼ Ե/Ք ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ, ԱՄՐԱՑՄԱՆ՝ ՈՒԹԵՂԱՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		—	—	—	—	—	—		
4	ՏԱՆԻՔԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						—	—		
5	ՊԱՏԵՐ, ՄԻՋՆԱՊԱՏԵՐ					—	—	—		
6	ԲԱՑՎԱԾՔՆԵՐ /ԴՈՆԵՐ ԵՎ ՊԱՏՈՒՀԱՆՆԵՐ/						—	—		
7	ՀԱՐԴԱՐՄԱՆ, ԵՐԵՍՊԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՏԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						—	—	—	—
8	ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ									—

Շինարարական աշխատանքների տևողությունը կազմում է 27 ամիս.

1.5.5 *Կադրային ապահովում և շինտեխնիկա. Հողային աշխատանքներ*

Կառուցապատման ենթակա հողատարածքը գտնվում է ՀՀ Արարատի մարզի Մասիս համայնքի 3-րդ թաղ. Հերացու փողոցի թիվ 21 հասցեում: Հողատարածքի ընդհանուր մակերեսը կազմում է 1.018հա:

Նախատեսվող աշխատանքների տևողությունը կկազմի 27 ամիս:

Շինարարությունում ներգրավված աշխատողների ընդհանուր թիվը՝ 90 մարդ, որից

- Բանվորներ -81 մարդ
- Ինժեներներ -9 մարդ

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի, փոխադրամիջոցների ցանկը՝

- Աշտարակային կոունք КБ - 403՝ 3 հատ
- Ինքնաթափ 20տ՝ 8 հատ
- Էքսկավատոր 0.65 մ³ շերտիով՝ 3 հատ
- Ավտոկոունկ՝ 3 հատ
- Բուլդոզեր՝ 2 հատ

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումը կիրականացվի է շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Հողային աշխատանքներ՝

Հանույթ՝ 10955մ³

Հետլիցք՝ 6193մ³

Ավելացած հողային զանգվածը կտեղափոխվի Մասիս քաղաքի համայնքապետարանի կողմից օրենքով սահմանված վայր:

1.5.6 *Նյութերի և բնարեսուրսների օգտագործում*

Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես՝

- բետոն - 21050 մ³
- ամրան - 3000 տոննա
- ալյումինե կոմպոզիտային նյութեր - 200 մ²
- ապակի - 2000 մ²
- տրավերտինե երեսպատում - 3057 մ²
- բարձրորակ ներկ - 1000 մ²

Բետոնի շաղախի մատակարարումը կիրականացվի մասնագիտացված ընկերության կողմից, պայմանագրային հիմունքներով:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման համար՝ և շինանձնակազմի խմելու կենցաղային նպատակների համար:

ա) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\Sigma, \text{л}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 9 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 81 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 մ³օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 702 օր

$$W_{\Sigma, \text{л}} = (9 \times 0.016 + 81 \times 0.025) \times 702 = 1522.64 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 2.17 \text{ մ}^3/\text{օր:}$$

б) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T, \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 500 մ²,

K_1 – 1 մ² օրական ջրցանի նորմը, 0.0015 մ³,

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, 450

$$U_1 = 500 \times 0.0015 \times 300 = 225 \text{ մ}^3/\text{շին. ժամ. կամ } 0.32 \text{ մ}^3/\text{օր}$$

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 1747.64 մ³/շին. ժամ:

Ջրամատակարարումը, տեխնիկական պայմանի համաձայն, կիրականացվի Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Հերացու փողոց 21.տարածքից 110մ հեռավորությամբ անցնող $\Phi 200$ մմ տրամաչափի ջրատարից:

Կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու համար ԻՏԱ և բանվորկական անձնակազմը կօգտվեն քոլեջում գոյություն ունեցող սանհանգույցներից:

1.5.7 Ջրամատակարարում և կոյուղի

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Հերացու 21 հասցեում «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման նախագծի «Ջրամատակարարում և կոյուղի» բաժնի նախագիծը մշակված է համաձայն՝

1.Պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի,

2.Շինարարական գծագրերի,

3.ՀՀ-ում գործող Շինարարական նորմերի և կանոնների

Նախագծված են՝ ջրամատակարարման և կոյուղու արտաքին ցանցեր, կանաչ տարածքների ոռոգման ցանց:

Ջրամատակարարում

Խմելու տնտեսական ջրամատակարարումը, տեխնիկական պայմանի համաձայն (կցված հավելվածների բաժնում), նախատեսված է իրականացնել Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի Հերացու փողոց 21. տարածքից 110մ հեռավորությամբ անցնող $\Phi 200$ մմ տրամաչափի ջրատարից: Ջրատարին միացման կետում նախատեսված է դիտահոր կարգավորող փականով: Ջրաչափական հանգույցը նախատեսված է տեղադրել քոլեջի տարածքից դուրս, ցանկապատի մոտ, դիտահորում:

-Հակահրդեհային կարիքների և անընդմեջ ջրամատակարարում ապահովելու համար համալիրի տարածքում նախատեսված է կառուցել $2 \times V=50\text{մ}^3$ տարողության ջրամբարներ, և պոմպակայան $Q=18.0\text{մ}^3/\text{ժ}$ $H=27\text{մ}$ հզորության 3 պոմպերով:

Հրշիջման անձեռնմխելի ծավալը ջրամբարում ապահովելու համար նախատեսված է պոմպերի ավտոմատ շահագործում:

Համալիրը սնող ջրագիծը նախատեսված է կառուցել պոլիէթիլեն $\Phi 90$ մմ տրամաչափի ջրամատակարարման խողովակներով, 1.10մ խորությամբ: Ջրամատակարարման բակային ցանցը՝ պոլիէթիլեն $\Phi 63$ - $\Phi 90$ մմ խողովակներով: Ջրամատակարարման դիտահորերը նախատեսված են՝ կլոր, ըստ Տ.Ն. 901-09-11.84 -ի:

Կենցաղային կոյուղի

Կենցաղային կոյուղու արտաքին ցանցը ինքնահոս է: Նախատեսված է կառուցել պոլիէթիլենային $\Phi 160$ - $\Phi 200$ մմ տրամաչափի խողովակներից: Կոյուղագծի վրա թեքման և միացման կետերում անհրաժեշտ դիտահորերը նախատեսված են՝ կլոր, ըստ Տ. Ն. 902-09-22.84 -ի:

Կոյուղաջրերը բակային կոյուղու ցանցի օգնությամբ ինքնահոս եղանակով հավաքվում են տարախքում նախատեսված հավաքող հորում և այնտեղ նախատեսված սուզված պոմպերի օգնությամբ մղվում քաղաքային կոյուղուն միացման կետ, որը տրված է տեխնիկական պայմանով:

Հորում նախատեսված սուզված պոմպերը, ավտոմատ համակարգի շնորհիվ, ունեն հաջորդաբար աշխատելու հնարավորություն: Պոմպերի աշխատանքը կառավարվելու է հորում տեղադրվող, կեղտաջրի մակարդակաչափերի օգնությամբ:

Ռոռգում

Քոլեջի կանաչ տարածքի ռոռգման համակարգի, ինչպես նաև ջերմոցների և ձկնաբուծարանի համար անհրաժեշտ ջրապահանջի սնման աղբյուր նախատեսված է տարածքում գործող խորքային հորը:

Կանաչ գոտու ոռոգմը նախատեսված է իրականացնել անձրևային եղանակով: Ոռոգման ցանցը նախատեսված է կառուցել պոլիէթիլենային Φ25-Φ90 մմ խողովակներով ստորգետյա տեղադրումով:

1.5.8 Էլ. մատակարարում

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Հերացու 21 հասցեում «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի Էլ. մատակարարումը համաձայն ՀԷՑ ՓԲԸ կողմից ստացված տեխնիկական պամանների (կցված հավելվածների բաժնում) հնարավոր կլինի իրականացնել վերոնիշյալ քոլեջի հաշվեկշռի՝ ԳԵ 2982-ի 0.4կՎ վահանից:

Հիմնական Էլ. մատակարարման իրականացման համար, կառուցապատողը պետք է դիմի «ՀԷՑ» ՓԲԸ ցանկացած սպասարկման կենտրոն (մասնավորապես՝ ք. Երևան, Արմենակյան 127)՝ ներկայացնելով ԷՄՕԿ-ի 13.2 կետի պահանջներով նախատեսված փաստաթղթերը՝ Էլ. Ցանցին միացման պատվեր ձևակերպելու համար:

1.5.9 Գազամատակարարում

ՀՀ Արարատի մարզի Մասիս քաղաքի Հերացու 21 հասցեում «Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի գազամատակարարումը, համաձայն Գազպրոմ Արմենիա ՓԲԸ կողմից ստացված տեխնիկական պայմանների (կցված հավելվածների բաժնում), 145մ3/ժ նախատեսվող ծախսով հնարավոր կլինի իրականացնել՝ ք. Մասիս 3-րդ թաղամասի N46 ՊԳԿԿ-ն սնող մ/ճ վերգետնյա գազատարից:

1.5.10 Ջեռուցում և օդափոխություն

«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի ջեռուցումը նախատեսված է տարածքում նախագծվող կաթսայատնից: Սենքի ներքին ջերմաստիճանները ընդունված են համաձայն ՀՀ Գործող շինարարական նորմերի: Ջեռուցման համակարգը երկխողովականի է ներքին բաշխումով, ջերմատարի փակուղայի շարժմամբ: Որպես ջեռուցման սարքեր ընտրված են պոլիպրոպիլենային խողովակներ ալյումինե շերտով: Մատակարարվող և հետադարձ խողովակները նախատեսված է անցկացնել նկուղային հարկի առաստաղի տակով:

Մասնաշենքում իրականացվում է բնական և արհեստական ներածող և արտածող ընդհանուր փոխանակային օդափոխություն: Լսարաններում օդի արտածումը բնական է, որոշ ներածման օդը տրվում է ներածման փականների և օդափոխիչ –ռեկուպերատոր սարքերի միջոցով: Առանձին արտածման և ներածման համակարգեր են նախատեսված խոհանոցի, մարզասրահի համար: Սանհանգույցներից օդի արտածումը բնական է:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՂ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԽԵՄԱՆ

2.1 Դիտարկվող տարածքային ֆիզիկա-աշխարհագրական դիրքը

Մասիս քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի կենտրոնական մասում՝ Հրազդան գետի ստորին հոսանքի ավազանում: Հյուսիսից սահմանակից է Արարատի մարզի Այնթապ, Նոր Խարբերդ, արևմուտքից՝ Սայաթ-Նովա, հարավից՝ Նորամարգ, արևելքից՝ Մարմարաշեն, Նոր Կյուրին գյուղերին:

Մարզկենտրոն Արտաշատից գտնվում է 20 կմ դեպի արևմուտք, իսկ Երևանից 17 կմ դեպի հարավ:

2.2 Տարածքի գեոմորֆոլոգիական, հիդրոլոգիական, հիդրոերկրաբանական, ինժեներաերկրաբանական, սեյսմատեկտոնական պայմանները

Ուսումնասիրվող համայնքը գտնվում է հանրապետության սեյսմակտիվ գոտիներից մեկում, Արարատյան դաշտավայրի կենտրոնական մասում:

Ժամանակակից Արարատի գոգավորության կառուցվածքը սկսվել է ձևավորվել վերին էոցեն-օլիգոցենի ժամանակահատվածում և մինչև հիմա ենթարկվում է ճկման: Դրա մասին է վկայում դեպրեսիայի կենտրոնական մասի նեոգենի հասակի գոյացությունների հզորության մեծացումը: Մասնավորապես լճային նստվածքների հզորությունը այստեղ կազմում է 400մ: Լճային նստվածքները ներկայացված են կոպճա-կավավազա-ավազա-ավազակավային գոյացումներով, ծածակված լճային կավերով, որտեղ հանդիպում են ոսպնյակաձև հրաբխային գոյացումներ:

Ուսումնասիրված տարածքում ֆիզիկաերկրաբանական երևույթները ներկայացված են մակերևութային համատարած լվացումով մակերևութային տեղումներով:

Ուսումնասիրված տարածքում տեխնածին երևույթները բացակայում են:

Տարածքի գեոմորֆոլոգիական պայմանները

Մասիս քաղաքի տարածքը գեոմորֆոլոգիական տեսակետից ունի հարթ ռելիեֆային բնույթ:

Ուսումնասիրված տարածքում կարելի է առանձնացնել գեոմորֆոլոգիական մեկ էլեմենտ՝

Այլովիալ պրոյուվիալ ակումուլյատիվ հարթավայր, մակերևութի թեքությունը չի գերազանցում 10%:

Տարածքի ինժեներաերկրաբանական պայմանները

Լիթոլոգիական տեսակետից Մասիս քաղաքի տարածքում առանձնացրել են հետևյալ երկրաբանական շերտախմբերը՝

1. Ժամանակակից այլովիալ-պրոյուվիալ գրունտեր, ներկայացված գորշ կավավազով մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և

կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

2. Վերին չորորդական լճա-ալյուվիալ նստվածքներ ներկայացված Խճա-մանրախճային գրունտներով մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Մեծաբեկորային գրունտներով, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

Տարածքի հիդրոերկրաբանական պայմանները

Հիդրոերկրաբանական տեսակետից տարածքը ոչ բարենպաստ է սեյսմիկ ազդեցության ժամանակ, քանի որ ստորգետնյա ջրերը, տեղադրված են մակերեսից 5մ-10 մ մակարդակի վրա: Ստորգետնյա ջրերը կապված են միջլավային և լավաների տակ գտնվող հոսքերի հետ, ունեն ինֆիլտրացիոն բնույթ:

Գրունտային ջրերի առկայությունը կավային գրունտներում բացատրվում է ջրհագեցած ավազների բազմաթիվ ենթաշերտերով և ոսպնյակների առկայուցամբ, որը հանգեցրել է ստորգետնյա ջրերի ցիրկուլյացիայի բարդ պայմանների և ջրատար հորիզոնների առկայության:

Տարածքի լիթոլոգիական պայմանները

Լիթոլոգիական տեսակետից առանձնացվում են՝

Շերտ թիվ 1 Կավավազ բաց և մուգ մոխրագույն, գորշավուն երանգով, պինդ և փափուկ պլաստիկ թանձրության մինչև 35% քարակտորների պարունակությամբ, փոշենման ավազի ենթաշերտերով հաճախակի կարբոնատային և աղային, տարածքում կավավազները ներկայացված են նաև գերնստող տարատեսակով: Հզորությունը տատանվում է 2.3 – 5.4 մետր:

Շերտ թիվ 2 Մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Հզորությունը տատանվում է 2.0 – 4.5 մետր:

Շերտ թիվ 3 Խճա-մանրախճային գրունտ մեծաբեկորների պարունակությամբ, ավազային և կավային լցանյութով մինչև 30-35%, քարաբեկորները ներկայացված են հրաբխային ապարներով, կավերի և ավազների ենթաշերտերով և ոսպնյակներով:

Հզորությունը տատանվում է 3.5 – 6.0 մետր:

Շերտ թիվ 4 Մեծաբեկորային գրունտ, խճի և մանրախճի խառնուրդով, քարակտորների արանքները լցված են մինչև 10% կավավազային և ավազային լցանյութով: Քարակտորները ներկայացված են հրաբխային ապարներով:

Հզորությունը տատանվում է 2.8 – 5.3 մետր:

Չորրորդական այրուվիալ պրոյուվիալ առաջացումներ

Գրունտների ֆիզիկա-մեխանիկական հատկանիշների ուսումնասիրման համար օգտագործվել են տարածքի երկրաբանա-լիթոլոգիական կտրվածքին մասնակցող գրունտների հետևյալ տարատեսակները.

Կավային գրունտներ (Շերտեր թթ. 1)

Բեկորային գրունտներ (Շերտեր թ. 2, 3, 4)

Ստորև աղյուսակում բերված են գրունտների միջինացված ֆիզիկամեխանիկական ցուցանիշները:

Ֆիզիկա մեխանիկական ցուցանիշներ	Չափման միավոր	Գրունտներ			
		շերտ 1	շերտ 2	շերտ 3	շերտ 4
1	2	3	4	5	6
Ծավալային կշիռ	կգ/մ ³	1700	1750	1850	1700
Տեսակարար շաղկապվածություն	ՄՊա	-	0.005	-	-
Ներքին շփման անկյուն	աստիճան	29	22	34	20
Դեֆորմացիայի մոդուլ	ՄՊա	20	15	25	15
Պայմանական հաշվարկային ճնշում	ՄՊա	0.25	0.15	0.30	0.20

Ելնելով տարածքի շինարարության համար պիտանելիության աստիճանից, ինժեներական նախապատրաստական աշխատանքների ծավալներից և բնույթից, ինչպես նաև հիդրոերկրաբանական պայմաններից, գեոմորֆոլոգիական հատկանիշներից և լիթոլոգիական կառուցվածքից, ուսումնասիրվող տարածքում առանձնացվել է երկու ինժեներաերկրաբանական շրջան՝ բարենպաստ և անբարենպաստ:

ՀՀՇՆ II-6.02-2006 Սեյսմակայուն Շինարարություն Նախագծման Նորմեր՝ նորմատիվային փաստաթղթում ներկայացված սեյսմիկ գոտնորման քարտեզը, ըստ որի ուսումնասիրվող տարածքը գտնվում է երրորդ սեյսմիկ գոտու մեջ: Այդ գոտուն համապատասխանում է 0.4g հորիզոնական արագացման արժեքը:

I-3.2.1.4. Լանդշաֆտների դասակարգումը և գնահատականը

Լանդշաֆտի նկարագիրը

Ուսումնասիրող տարածքի լանդշաֆտը Արարատյան հարթավայրի կիսաանապատային լանդշաֆտային գոտին է՝ անապատների և մշակովի հողի

տեղամասերով, որոնք ձևավորվել են մարդու հազարամյա ագրոմշակութային գործունեության արդյունքում: Այստեղ ոռոգման խիտ ցանցի անցկացման շնորհիվ հողաբուսական ծածկույթը փոփոխված է այնպես, որ զգալի տարածություններում անհետացել են այդ գոտիներին բնորոշ գորշահողերը և բուսական բնական համակեցությունները: Մարդու կողմից ստեղծվել է կուլտուրական լանդշաֆտ՝ չոր մերձարևադարձային պտղաբուծության, այգեգործության և բանջարանոցային տարածությունների գերակշռությամբ: Անապատային և կիսաանապատային լանդշաֆտի բնական տեղամասեր մնացել են միայն անջրդի տարածություններում, ցանքատարածությունների դաշտամիջյան ճանապարհների եզրերին, կամ ոռոգման կանալների շուրջ չմշակվող տարածքներում, արոտավայրերում, բնության հատուկ պահպանվող տարածքներում և ջրաձահձային էկոհամակարգերում:

Արարատյան հարթավայրի հյուսիսային մասը, որն ընդգրկում է Քասախ, Հրազդան և Վեդի գետերի ավազանները, հանդիսանում է Հայաստանի հիմնական գյուղատնտեսական շրջանը, սակայն հողերի աղակալման և ճահճացման պահճառով հարթավայրի ավելի քան քառորդ մասը գյուղատնտեսական նպատակներով չի օգտագործվում: Ընդ որում, այդպիսի տարածքների ընդարձակմանը նպաստում են նաև ոչ նորմավորված ոռոգումը, դրենաժային համակարգի անբավարար վիճակը և ջրալույծ աղեր պարունակող ստորգետնյա ջրերի մակարդակի բարձրացումը:

Արարատյան դաշտավայրի ստորգետնյա ջրերի բարձր մակարդակի պատճառ է հանդիսացել խոնավ ցածրավայրային աղուտային մարգագետինների առկայությաունը: Այնտեղ, ուր գրունտային ջրերը մոտ են մակերևույթին, առաջացել են գերխոնավ, այպես կոչված՝ չալաների հողեր: Այս գոտում առանձնակի տեղ են զբաղեցնում նաև ցածրավայրային ճահճային լանդշաֆտները, որոնք հիմնականում ենթարկված են մելիորացիայի ու կուլտուրականացման: Որոշ վայրերում հանդիպում են թաքիրանման հողեր և ավազի բլրակներ: Հարավ արևելյան նախալեռնային ցածր լեռնային նստվածքային ջրամերժ ապարներ ունեցող տարածքներում, շնորհիվ չոր կլիմայի, առաջացել են անապատա-կիսաանապատային լանդշաֆտների որոշակի տիպեր՝ Բեդլենդներ, որոնք գերծ են բուսական ծածկույթից: Կիսաանապատային լանդշաֆտների առանձնակի հատկություններից մեկն էլ գիպսի կուտակումն է:

2.3 Տարածաշրջանի հողերի նկարագիրը

Տարածաշրջանի հողային ծածկույթն իրենից ներկայացնում է ՀՀ տարածքի տարբեր մասերում հանդիպող տարաբնույթ հողածածկեր: Տարածաշրջանի ցածրադիր մասում տարածված են կիսաանապատային հողերը, որոնք տարածաշրջանում կազմում են աննշան տոկոս:

Նախալեռնային շրջաններում լայնորեն տարածված են խայտաբղետ, կավաբեր, տեղ-տեղ աղակալված հողերը: Տարածաշրջանը ծածկված է ջրաբերուկային-մարգագետնային՝ հնումոռոգվող հողերով, անտառային բուսականությունը՝ բնահողային ծածկույթին համապատասխան, նույնպես ենթարկված է ուղղահայաց գոտևորման: Առավել ցածրադիր

տեղերում, Արաքսի և նրավտակների փուխը բերվածքներում ձևավորվել են հումուսով աղքատ գորշ հողեր՝ բաց գորշագույն հողեր ու տիպիկ գորշահողեր՝ աղակալած տարածքներով: Անապատի համար բնորոշ այս հողերի առաջացմանը նպաստել են կլիմայի չորությունը և բուսական ծածկույթի աղքատությունը: Բնորոշ են բաց գորշագույն և գորշագույն հողերը, որոնք հիմնականում կուլտուրականացված են ևռոգվում են գյուղատնտեսական նպատակով: Այս գոտու լանդշաֆտների մեծ մասը վերափոխվել են ջերմասեր կուլտուրաների ագրոլանդշաֆտների: Վերջին տասնամյակներին իրականացվել են աղուտային հողերի աղազրկման և կուլտուրականացման աշխատանքներ:

Արարատյան հարթավայրի արևմտյան մասում հանդիպում են աղակալած հողեր՝ ալկալահողերը:

Տեղ-տեղ երևում են թաքիրներ՝ դեղնա-սպիտակավուն կավի ճաքճքած մակերեսով տարածություններ: Չոր ցամաքային կլիմայի պայմաններում գերակշռում են ֆիզիկական հողմնահարման պրոցեսները՝ պայմանավորելով քայքայված փուխը նյութերի կուտակումը և կենսանյութի արագ հանքայնացումը:

2.4 Կլիման և օդերևութաբանական պայմանները

Տեղանքի կլիմայական բնութագիրը ներկայացնելու համար օգտագործվել են տարածաշրջանում գործող Արտաշատ օդերևութաբանական կայանի բազմամյա դիտարկումների տվյալները: Օգտագործելով կլիմայական հաշվարկային մեթոդները, հաշվարկվել են տեղանքի կլիմայական բնութագրերը:

Շրջանի կլիման չափավոր տաք է: Ձմեռը տևական և համամատաքար տաք է, թույլ քամիներով, բավական կայուն ու հաստ ձնածածկ շերտի գոյացումով: Ամառը շոգ է, չոր:

Օդի միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է 11.7°C , հունվարինը՝ -4°C , ապրիլինը՝ 12.8°C , հուլիսինը՝ 21.6°C , հոկտեմբերինը՝ 13°C : Ջերմաստիճանի ամսական ամպլիտուդան 8.6°C է: Բացարձակ նվազագույն ջերմաստիճանը՝

-29°C , դիտվել է հունվարին, բացարձակ առավելագույնը՝ $+43^{\circ}\text{C}$ է՝ դիտվել է օգոստոսին:

Հողի մակերևույթի վրա միջին տարեկան ջերմաստիճանը 9°C է: հունվարին՝ -5°C , իսկ հուլիսին՝ 23°C : Հողի սառչելու առավելագույն խորությունը հասնում է 70 սմ:

Օդի միջին տարեկան ճնշումը 861.0 մբ է, բացարձակ խոնավությունը 8.2մբ է, իսկ հարաբերականը՝ 72%:

Տարեկան մթնոլորտային տեղումներիքանակը կազմում է 265մմ: Տեղումների առավելագույնը դիտվում է օգոստոսին՝ 72 մմ, իսկ նվազագույնը դեկտեմբերին՝ 20 մմ:

Ձյան ծածկույթի միջին հաստությունը հասնում է 10 սմ: Ձյան տեսքով տեղումների քանակությունը 124 մմ է: Նոյեմբերի 13-ից դիտվում է կայուն ձնածածկույթ, որը վերանում է ապրիլի 5-ին: Ձյան ծածկոցի առավելագույն շերտի բարձրությունը 10սմ է, միջինը՝ 10 սմ:

Ընդհանուր ֆոնային կլիմայական բնութագիրը

Ֆոնային կլիմայական բնութագիրը իր մեջ ընդգրկում է երկու հիմնական ասպեկտ՝

- կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից

- կլիմայի գնահատականը վնասակար նյութերի ցրման պայմանների վրա ազդեցության տեսանկյունից:

Կլիմայի գնահատականը մարդու ֆիզիոլոգիական հարմարավետության վրա ազդեցության տեսանկյունից տրված է աղյուսակ 5.4-ում:

Կլիմայի գործոնների կենսակլիմայական գնահատականի չափանիշները

Աղյուսակ 5.4

Կլիմայի գործոնները	Հարմարավետությունը	Անհարմարավետությունը	
		գերտաքացում	սառեցում
Օդի ջերմաստիճանը, °C	12-14	24-ից բարձր	-30-35, -1.5 մ/վրկ, -25, 2.0 մ/վրկ, -15, 3. մ/վրկ Քամու դեպքում
Քամու արագությունը, մ/վրկ	0.5-3.0	փոքր 0.5 մեծ 3.0	5-ից մեծ քաղցածրության ջերմաստիճանի դեպքում
Հարաբերական խոնավությունը, %	30-70 մայիս-օգոստոս	30-ից փոքր 70- ից բարձր Մնացած 9 ամիս	80- ից բարձր չկա

Օդի միջին ամսական ջերմաստիճանը հուլիս-օգոստոս ամիսներին գերազանցում է 24 °C: Գերտաքանցման փաստը ինչպես համայնքներում նկատվում է տարվա ընթացքում 2 ամիս՝ 62 օր:

12-14°C գերազանցման դեպքերը նկատվում են ապրիլ, մայիս, հունիս, հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսներին:

Օդի հարաբերական խոնավության տեսանկյունից մարտից մինչև հոկտեմբեր ամիսները դիտարկվում են ինչպես հարմարավետ, 80%-ից բարձր խոնավություն չի արձանագրվել:

70%-ից բարձր խոնավություն նկատվում է հունվար, փետրվար ամիսներին, և նոյեմբեր, դեկտեմբեր ամիսների ընթացքում: 3.0 մ/վրկ-ից մեծ քամու արագություն չի դիտարկվում:

Դեկտեմբերից–մարտ ժամանակահատվածում օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը դիտարկվում է -15°C -ից բարձր, սակայն նշված ամիսներին քամու արաւոյւոյնը գտնվում է 1.4-2.8մ/վրկ-ի սահմաններում:

Օդի միջին ամսական տարեկան ջերմաստիճանը ($^{\circ}\text{C}$)

Աղյուսակ 1.2

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Արտաշատ քաղաք,	-4	-1.3	5.3	12.8	17.7	21.6	25.5	24.5	20.0	13.0	6.0	-0.8	11.7

Միջին ամսական և տարեկան օդի հարաբերական խոնավությունը (%)

Աղյուսակ 1.3

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Արտաշատ քաղաք	78	73	64	57	59	54	51	51	57	66	75	79	64

Քամու միջին ամսական և տարեկան արագությունը (մ/վրկ)

Աղյուսակ 1.4

Դիտարկումներ	I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարի
Մասիս քաղաք	0.9	1.3	1.6	1.6	1.3	1.2	1.3	1.2	1.2	0.9	0.8	0.7	1.2

Ամառվա շոգ ամիսների ժամանակահատվածի անալիզը ցույց է տալիս, որ նշված համայնքներում 1T, 2T և 3T դասերի «շոգ եղանակները դիտարկվում են հուլիս, օգոստոս ամիսներին, որի ընթացքում առաջանում է ջերմային բեռնվածություն մարդու օրգանիզմի վրա: Հարմարավետության ժամանակահատվածը ժամը 13-ից մինչև ժամը 21-ը նշված համայնքների համար կազմում է 83%, անհարմարավետության ժամանակահատվածը 17%:

Անհարմարավետության պայմանների հաշվառման չափանիշը հանդիսանում է անհարմարավետության ժամանակահատվածի տևողությունը:

Տարվա կտրվածքով անհարմարավետության ժամանակահատվածը մեծ է 8% (17%) տարեկան ժամանակահատվածից, որը հանգեցնում է նրան, որ նախագծման ժամանակ անհրաժեշտ է նախատեսել միջոցառումներ:

2.5 Օդային ավազան

Օդային ավազանի աղտոտվածության մոնիտորինգային աշխատանքները կատարվում են ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն» (ՇՄՏՄԿ) ՊՈԱԿ-ի կողմից: Հաշվի առնելով այն, որ Մասիս համայնքում մթնոլորտային օդի աղտոտվածության դիտարկումները բացակայում են, սույն հայտում բերվում են օդային ավազանի ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքները:

ՀՀ բնակավայրերի (բացառությամբ Երևան, Վանաձոր, Արարատ, Հրազդան և Գյումրի քաղաքների) մթնոլորտային օդի աղտոտող նյութերի ֆոնային կոնցենտրացիաների արժեքները ներկայացված են Աղյուսակ 3-ում, որոնց հաշվարկները կատարվել են ըստ տվյալ բնակավայրի ազգաբնակչության թվաքանակի:

ՀՀ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակը ընդունված է համարել ՀՀ-ի ազգային վիճակագրական ծառայության (ԱՎՕ) 2011 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ վիճակագրական տեղեկագրում բերված տվյալները: Համաձայն ՀՀ ԱՎՕ վիճակագրական տեղեկագրի՝ Մասիսի համայնքում բնակչության թվաքանակը կազմել է 20 500 մարդ:

Ելնելով նշված թվաքանակից և ֆոնային կոնցենտրացիաների հաշվարկային արժեքներից (Աղ.3), Մասիս համայնքում աղտոտիչների ֆոնային կոնցենտրացիաների արժեքները գնահատվում են հետևյալ տիրույթում. փոշումասնիկներ՝ 0,3մգ/մ³, ածխածնի մոնօքսիդ՝ 0,8 մգ/մ³, ազոտի երկօքսիդ՝ 0,015 մգ/մ³ և ծծմբի երկօքսիդ՝ 0,05 մգ/մ³:

Նշված մակարդակները գտնվում են ՀՀ գործող նորմերի (ՀՀ որոշում 160-Ն, 2006 թ.) սահմանում, բացառություն է կազմում ընդհանուր փոշու մասնիկները, որոնց ֆոնային կոնցենտրացիան մոտ 1.5 անգամ գերազանցում է գործող ՍԹ-Կ-ն ($ՍԹ-Կ_{\text{փոշի}} = 0,15 \text{ մգ/մ}^3$):

Աղ. 3 *Մթնոլորտի աղտոտող որոշ նյութերի ֆոնային կոնցենտրացիաները՝ հաշվարկված ըստ բնակավայրերի ազգաբնակչության թվաքանակի (2011թ.-ի մարդահամար):*

Բնակչության քանակը (հազ.)	Նյութերի ֆոնային կոնցենտրացիաները, (մգ/մ ³)			
	Ընդհանուր փոշի	Ծծմբի երկօքսիդ	Ազոտի երկօքսիդ	Ածխածնի օքսիդ
50 -125	0,4	0,05	0,03	1,5
10 - 50	0,3	0,05	0,015	0,8
< 10	0,2	0,02	0,008	0,4

2.6 Բուսական և կենդանական աշխարհը

ՀՀ Արարատի մարզի տարածքը գտնվում է Երևանի ֆլորիստիկ շրջանում, անապատային-կիսաանապատային գոտում:

Կենսաբանական ռեսուրսներ: Կիսաանապատային գոտու կենսառեսուրսները աչքի չեն ընկնում իրենց բազմազանությամբ, սակայն կերհանդակները ներկայացված են օշինդրային, օշինդրա-էֆեմերային, օշինդրա-հացազգային, օշինդրա-օշանային և օշանայինբուսական համակեցություններով: Ուտելի և համեմունքային բույսերից կարելի է նշել բոխին, շրեշր, շուշանը, դանձիլը: Եթերայուղատու բույսերից են ուրցը, անթառամը, օշինդրը: Բնական խեժով հարուստ են հատկապես տրագականտային զագերը: Որսի օբյեկտ են համարվում լորը, քարիկաքավը, մի շարք ջրլողթռչուններ /սևփարփար, մեծսուզակ, փոքրսուզակ, կոնչանքադ, մոխրագույն բադ և այլն:

Մարզի բուսականության առավել տարածված տեսակներից են կիսաանապատային, տափաստանային տեսակները, որոնք զբաղեցնում են տարածքի հյուսիս-արևելյան և հարավ-արևմտյան մասերը:

Մարզի կլիմայական պայմանները թույլ են տալիս այդ հողերի վրա աճեցնել տեխնիկական, այգեգործական և մերձարևադարձային, ինչպես նաև հացահատիկային կուլտուրաներ:

2.6.1 Բուսական աշխարհը

Անապատային չորասեր բուսականության բնորոշ բուսատեսակներից են շորան, բալախը, սարսազան որոնք դիմանում են աղակալմանը: Քաղաքի հարավային մասում գերակշռում է հալոֆիտային, հալոքսեռոֆիտանապատային բուսականությունը - *Salsola eticoides*, *S. dendroides*, *S. nitraria*, *Haioenemumstrobilaceum*: Արևելքում օշինդրա-էֆեմերային կիսաանապատային բուսականության գերակշռությամբ - *Artemisia fragrans*, *Kochiaprostrata*, *Capparis herbacea*, *Ceratoides papposa*, *Atraphaxi sspinosa*, *Rhamnus paiiasii*, *Tanacetum argyrophyllum*, *Poa bulbosa*, տեսակներ - *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*: Կիսաանապատային գոտու համար բնորոշ բուսատեսակներից են օշինդր բուրավետը, Օշան գորշ, Օշան հավամբանման, գեղաձնկիկ մատիտեղանման, լերդախոտ ալեհեր, ավելաբույսգետնատարած: Հազվագյուտ և անհետացող գիպսոֆիտ անապատային բուսական ֆորմացիաներ *Cephalorrhynchustakhtadzhianii*, *Zygophyllumatriplicoides*:

Մարզի էնդեմիկ տեսակներն են կտավատազգիներ (*Linaceae*), մեխակազգիներ (*Caryophyllaceae*):

Մարզի տարածքում հանդիպող և անհետացող բուսական տեսակների վերաբերյալ տեղեկատվությունը վերցված է ՀՀկառավարության 2010 թվականի հունվարի 29-ի N71-Ն որոշմամբ հաստատված ՀՀ կենդանիների Կարմիր գրքից:

Էնդեմիկ տեսակն է իշակաթնուկ ազգիներ (*Euphorbiaceae*):

2.6.2 Կենդանական աշխարհ

Տարածքը հարուստ է կիսաանապատային գոտուն բնորոշ սողուններով, ինչպիսին են միջերկրածովային կրիան /*Testudograeca*/, բարեկազմ օձ ազլուխ մողեսը /*Ophisopselegans*/, Շտրաուխի /*Eremiasstrauchi*/ և Անդրկովկասյան /*E. pleskei*/ մողեսիկները, Անդրկովկասիան թաքիրային կլորագլուխը /*Phrynocephalushelioscopuspersicus*/, մողեսաօձը

/Malpolonmonspessulannus/, վզնոցավոր /Eirenis collaris / և չ այլական /E. punctatolineatus / էրենիսները, կարմրավոր սահնոձը կամ շահմարը / Coluberschmidt / և կապարագույն սահնոձը /C. nummifer/, Անդրկովկասյան գյուրգան /Viperalebetina/: Կրծողներից – սովորական /Microtus arvalis/ և հասարակական /M. socialis/ դաշտամկները, հարավային /Meriones meridianus/, փոքրասիական /M. blackleri/ և Վինոգրադովի / M. vinogradovi / ավազամկները: Կատվագզիներից - եղեգնակատուն /Felis chaus/: Ջրահահձային էկոհամակարգերում հանդիպում են Կասպիական կրիան/Mauremiscaspica/ և լճագորտը/Ranaridibunda/:

Նշված համայնքային տարածքներում հանդիպում են ամենուր ողնաշարավորներից՝ լճագորտ, մողես, սովորական լորտու, տնային ճնճուկ, մոխրագույն ագռավ, կաչաղակ, սովորական և հասարակ դաշտամուկ, մոխրագույն առնետ, անողնաշարավորներից՝ անձրևորդ, մրջյուն, մեղու, ծղրիդ, ճռիկ, մորեխ, փայտոջիլ, կապտաթիթեռ, մոծակ, սենյակային և դաշտային ճանճեր:

Կենդանիների էնդեմիկ տեսակներն են՝ հայկական մկնիկ, կովկասյան տարավոն, Չեռնովի մերկաչք:

2.6.3 Պատմամշակութային հուշարձաններ

Արարատի մարզի Մասիս քաղաքի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որը 2002 թ. հաստատվել է ՀՀ կառավարության կողմից: Ցանկում ներառված է ընդամենը 5 հուշարձան (4 միավոր):

հուշարձան	կառուցված	Վայր, հասցե	կոորդ	համարա նիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
Գերեզմանոց	19-20 դդ.	հվ եզրին	—	3.57/1		Մբ. Աստվածածին եկեղեցուց 200 մ հս-աե	բեռնել պատկեր
Եկեղեցի Մբ. Աստվածածին	19 դ.	հվ եզրին	—	3.57/2	S	կիսավեր	բեռնել պատկեր
Խաչքար	1542 թ.		—	3.57/4.1	Հ	մատուռի ներսում	բեռնել պատկեր
Հուշարձան Երկրորդ	1983 թ.	գ. մ.	—	3.57/3	S	քանդ.՝ Գ. Եփրեմյան	բեռնել պատկեր

հուշարձան	կառուցված	Վայր, հասցե	կոորդ	համարանիշ	նշան.	հավելյալ նշումներ	պատկեր
աշխարհամաքտում զոհվածներին							
Մատուռ Սբ. Թադևոս Առաքյալ	16 դ.	հվ եզրին	—	<u>3.57/4</u>	S	վրկռ.՝ 20 դ., Սբ. Աստվածածին եկեղեցուց հս-ամ	<u>բեռնել պատկեր</u>

Գործունեության իրականացման տեղանքին հարակից չկան արգելոցներ, ազգային պարկեր կամ հատուկ նշանակության պահպանվող տարածքներ, ինչպես նաև բնութագրվող տարածքում և տարածքի մերձակայքում չկան ազդեցության ենթակա պատմամշակութային հուշարձաններ:

2.7 Թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքների ընթացքում, առաջացող թափոնատեսակներն են՝ կենցաղային աղբը՝ 150-200 կգ, որը կտեղափոխվի մոտակա աղբավայր, և 1200մ³ շինարարական աղբը: Շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

Բոլոր տիպի շինարարական աշխատանքները պետք է կատարել պահպանելով պետ. նորմերը, կանոնները, ստանդարտները, ինչպես նաև նախագծի տեխնիկական պայմանները: Թաքնված աշխատանքների համար պետք է կազմել թաքնված ախատանքների ակտ տեխնիկական հսկողություն իրականացնող մարմնի կողմից հաստատված:

Շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվել հակահրդեհային անվտանգության վարչության կողմից հաստատված դրույթներով, շին. հրապարակի հակահրդեհային անվտանգության պատասխանատվությունը կրում է անմիջապես շինարարության ղեկավարը կամ նրան փոխարինող անձը:

Երեկոյան ժամերին դադարեցնել աղմկոտ աշխատանքների կատարումը:

3.1 Ռիսկերի գնահատում

Ներկայացվող գործունեության իրականացման ժամանակ շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են՝

- փորման բեռնման աշխատանքների,
- հողային զանգվածների տեղափոխման,
- շինարարական տեխնիկայի շահագործման,
- ջրամեկուսացման համար օգտագործվող նյութերի օգտագործման,
- բետոնային աշխատանքների հետ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

Սույն հայտում բերված են հիմնական բնապահպանական միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների:

3.2 Արտանետումների աղբյուրները

Ներկայացվող աշխատանքների կատարման ընթացքում հիմնական ռիսկերը կապված են արտանետումների հետ, որոնց ցանկը բերված է ստորև՝

- փոշու արտանետումներ հիմքերի փորման ընթացքում
- դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:

3.3 Բնապահպանական միջոցառումների ընդհանուր նկարագրություն

3.3.1 Մթնոլորտային օդ

Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ է իրականացնել ջրցան,
- պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգադրում:
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) տեղափոխումը պետք է իրականացվի փակ ծածկով մեքենաներով.
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը:

3.3.2 Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- անձրևվների ժամանակ առաջացող շինարարական հոսքաջրերը կուղորդվեն պարզաբան: Անձրևաջրերի նստեցման պարզաբանը գտնվում է շինարարական հրապարակին կից, իրենից ներկայացնում է պլաստմասե 25խմ ծավալով տարողություն, որի ծավալը ընտրվել է հաշվի առնելով, որ շինարարական աշխատանքները միաժամանակ կիրականացվեն 500քմ մակերեսով տարածքի վրա: Պարզաբանում տեղի է ունենում մեխանիկական նստեցում, պարզեցված ջուրը կօգտագործվի տարածքի ջրցանման համար, իսկ փոքր քանակներով նստվածքը կհեռացվի որպես շինադբ:

3.3.3 Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության համար նախատեսվում են.

- Շինարարական նյութերը կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- Շինարարական սարքավորումներից նավթանյութերի արտահոսքի հավանականությունը նվազեցնելու նպատակով, անհրաժեշտ է, որ այդ տարածքներում ապահովվի սարքավորումների և մեքենաների պատշաճ տեխնիկական վիճակ:
- Այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար պետք է տեղադրել ավագ կամ մանրախիճ: Այն դեպքերում, երբ մեքենաներից և սարքավորումներից կլինի վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսք, ապա պետք է փոված ավազը կամ մանրախիճը տեղափոխել համապատասխան աղբավայր և այն փոխարինել նորով:
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- տարածքը կբարեկարգվի և կմաքրվի շինադբից:

3.3.4 Արտակարգ իրավիճակների պատրաստվածությունը

Շինարարական աշխատանքների ընթացքում հնարավոր արտակարգ իրավիճակներն են՝

- Հրդեհի առաջացումը
- Հեղուկ նյութերի արտահոսքը
- Աշխատողների վնասվածքները
- Շահագործվող տեխնիկայի հետ վթարները:

Արտակարգ իրավիճակներին արագ արձագանքելու համար նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

- Մինչ աշխատանքների սկիզբը ոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդները, անցնում են հրահանգավորում ըստ աշխատանքի անվտանգության կանոնների: Հրահանգավորումը իրականացնում է աշխատանքների ղեկավարը:

- Մինչ աշխատանքների սկիզբը շինարարական հարթակը և տրանսպորտային միջոցները հազեցվում են հրդեհաշիջման առաջնային միջոցներով ու դեղարկողիկով, իսկ աշխատողներն անցնում են դրանց ճիշտ օգտագործմանն, ինչպես նաև առաջին բուժօգնության ցուցաբերմանն ուղղված հրահանգավորում:

- Հեղուկ նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար:

- Բոլոր աշխատողներին տրվելու են անհատական պաշտպանության միջոցներ:

Անբարենպաստ եղանակի դեպքում անվտանգության կարգավորման միջոցառումները կրում են կազմակերպչական-տեխնիկական բնույթ, նախատեսված են հետևյալ միջոցառումները՝

1. թույլ չտալ շինարարական տեխնիկայի գերբեռնված աշխատանք,
2. խստորեն հետևել տեխնոլոգիայի ընթացակարգին,
3. անդորրի պայմաններում ժամանակավորապես դադարեցնել աշխատանքը:

Հնարավոր վնասվածքների դեպքում տուժածին կցուցաբերեն առաջին բուժօգնության, ապա, անհրաժեշտության դեպքում, կտեղափոխվի քաղաքի մոտակա բժշկական հաստատությունը:

Ըստ նախնական գնահատման, ապահովելով նշված միջոցառումների պատշաճ մակարդակով իրականացումը, կարելի է արտակարգ իրավիճակների ռիսկը հասցնել նվազագույնի, իսկ առաջացման դեպքում արագ և արդյունավետ հակազդել դրանց:

3.3.5 Հակահրդեհային միջոցառումներ

ա) մշտապես իրականացնել շինարարական հրապարակի, բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունների ժամանակին մաքրում հրդեհավտանգ թափոններից և աղբից, քանի որ հակահրդեհային միջտարածությունները չեն կարող օգտագործվել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

բ) հրդեհաշիջման համար նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները և անցումները պետք է միշտ ազատ լինեն, շինարարության ընթացքում ճանապարհների փակման դեպքում, ջրային աղբյուրներին մոտենալու կամ այդ հատվածով անցնելու նպատակով տեղադրել շրջանցման ուղղությունը ցույց տվող ցուցանակներ,

գ) շինարարական աշխատանքների տեղամասերում տեղադրել հրդեհաշիջման սկզբնական միջոցներ, փակցնել հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ և այլն:

3.3.6 Աղմուկ և թրթռում

Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բոլորքի դեպքում:

Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝

- խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգալուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը;
- Աղմկահարույց աշխատանքներն հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին:
- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աշխատանքներում ներգրավել ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, ինչպես նաև դրանք շահագործել տեխնիկական նորմալ վիճակում:
- պարբերաար ստուգել և կարգադրել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները, բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը
- շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով:

3.3.7 Թափոնների կառավարում

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում թափոնների ճիշտ կառավարման համար կարևոր են հետևյալ միջոցառումների իրականացումը.

- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:
- Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր, կամ կրկնակի օգտագործվեն:
- Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից

- Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել
- Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը;
- Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում;
- Վտանգավոր Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը

Առաջացող շինարարական աղբն ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր:

3.3.8 Տարածքի բարեկարգում

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո կառուցապատումից ազատ տարածքը բարեկարգել:

Կանաչապատ տարածքների ոռոգուման ջուր կմատակարարվի հատուկ տարածքում գործող հորից: Ծառատեսակների համար կնախատեսվի անձրևային ոռոգման համակարգ:

Այն տեղամասերում, որոնք ենթակա են հնարավոր ազդեցության, տնկված ծառափուտային բուսականության բարձր աճը և կպչողականությունն ապահովելու նպատակով նախատեսվում է իրականացնել մոնիթորինգ:

4. ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԼԱՆ

«Մասիսի պետական գյուղատնտեսական քոլեջ» ՊՈԱԿ-ի շենքային պայմանների բարելավման շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է իրականացնել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման/մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ, երեք ամիսը մեկ հաճախականությամբ
2. Փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին, օրեկան 2-3 անգամ:
3. Օգտագործված մեքենայական յուղերով ու քսայուղերով հողերի հնարավոր աղտոտումից խուսափելու նպատակով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ
4. Աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 350 հազ. դրամ, ամբողջ շինարարության ընթացքում 700 հազ. դրամ:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԸ ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	ՊԱՐԱՄԵՏՐԵՐ	ՄԵՂՄԱՑՆՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԹԵՐԹԻԿ
Ընդհանուր դրույթներ	Նախագգուշացումներ և աշխատողների անվտանգություն	(a) Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները և համայնքը պետք է նախագգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ (b) Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունները ձեռք են բերվել (c) Կապալառուն պաշտոնապես համաձայնել է, որ աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան տնտեսությունների և շրջակա միջավայրի վրա: (d) Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) (e) Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ:
Շինարարական աշխատանքներ	Օդի որակ	(a) Շինաշխատանքների իրականացման ընթացքում հատուկ տարողություններ կկիրառվեն շինարարական աղբի հեռացման համար՝ Նշված տարողությունները պետք է պահպանվեն տարածքում և անընդհատ ցողվեն ջրով՝ թափոններից գոյացած փոշու քանակը նվազեցնելու նպատակով (b) Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով (c) Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի:
	Աղմուկ	(a) Շինարարական աշխատանքներից գոյացած աղմուկը կսամանափակվի թույլատրված ժամերի միջակայքում (b) Շինարարական աշխատանքների ընթացքում շարժիչների, օդի կոմպրեսորների և էլեկտրականությամբ սնվող սարքերը պետք է ծածկվեն:
	Թափոնների կառավարում	(a) Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: (b) Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: (c) Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից (d) Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն (e) Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները բազմանվազ օգտագործել
Կեղտաջրերի հեռացում	Ջրի որակ	(a) Շինարարական անձնակազմը կօգտվի գոյություն ունեցող կենցաղային միջոցներից, կոյուղաջրերի հեռացումը շինհրապարակից պետք է իրականացվի ընդհանուր կոյուղու համակարգի միջոցով,

		(b) Շինարարական տրանսպորտային միջոցները և սարքավորումները պետք է լվացվեն շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում:
Հետիոտների և երթևեկության ապահովություն	Շինարարական աշխատանքների հետևանքով հետիոտներին կամ հանրային տրանսպորտին սպառնացող ուղղակի կամ անուղղակի վտանգներ	(a) Շինարարության ազգային նորմերի համաձայն կապալառուն պետք է ապահովի պատշաճ անվտանգություն և շինարարությանն առնչվող երթևեկության կարգավորում, ինչը ներառում է, բայց չի սահմանափակվում հետևյալով. ▪ պարզ տեսանելի ցուցանակներ, զգուշացնող նշաններ շինհրապարակում հանրությանը պոտենցյալ վտանգների մասին նախազգուշացնելու համար, պետք է առկա լինեն պատնեշներ և շրջանցող ուղիներ ▪ Անձնակազմի կրթման համակարգ և երթևեկության կառավարման համակարգ, հատկապես՝ շինհրապարակ մուտք գործելու և հարակից տարածքում ծանր տրանսպորտի համար: Հետիոտների համար անվտանգ անցումներ երթևեկության գոնայում: ▪ Համապատասխանեցնել աշխատանքային ժամերը երթևեկության ակտիվության հետ, խուսափել ակտիվ երթևեկությունից՝ մարդկանց ակտիվ տեղաշարժի ժամերին: ▪ Երթևեկության ակտիվ կառավարում շինհրապարակում փորձված և երևացող անձնակազմի կողմից, եթե վերջինս անհրաժեշտ է մարդկանց ապահով և հարմար անցուղարձի համար. ▪ Պետք է ապահովվի ապահով և շարունակական մոտեցում դեպի գործող գրասենյակային շինությունները, խանութները և բնակելի շինությունները շինարարական աշխատանքների ընթացքում
Տարածքի բարեկարգում		- կատարել /բարեկարգման աշխատանքները՝ համաձայն նախագծի բարեկարգման պլանների;
Աղմուկի և թրթռումների կառավարում		- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակներիչափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը, - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին, - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;
Թափոնների կառավարում	Շին աղբի տեղադրում	- Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար:

	անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով հնարավոր է վտանգավոր նյութերի թափանցում հողի մեջ	- շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել - Անհրաժեշտ է մշակել և իրականացնել վտանգավոր նյութերի հետ անվտանգ կերպով վարվելու և պահեստավորելու ընթացակարգերը Անհրաժեշտ է նշանակել արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շին. հրապարակում; - Արտահոսքերի դեպքում, անմիջապես կլանիչ նյութով պետք է մաքրել առաջացած հետքերը հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար;
--	--	---

ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ /ՄՇՏԱԴԻՏԱՐԿՄԱՆ/ ՊԼԱՆ

Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Որտեղ իրականացնել	Ինչպես իրականացնել	Ժամանակամիջոց	Կատարող
Շինանյութերի մատակարարում	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից	Մատակակարի հիմնարկում կամ պահեստում	Փաստաթղթերի ստուգում	Մատակարարման պայմանագրերը կնքելու ընթացքում	Կապալառու
Շինանյութերի և թափոնների տեղափոխում Շինարարական տեխնիկայի տեղաշարժ	- Մեքենաների և տեխնիկայի համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում - Բեռնատարերի բեռնվածության սահմանափակում - հերթականության ապահովմամբ - Տեղափոխումների ժամանակացույցի և երթուղիների պահպանում	- Շինհրապարակ - Շինանյութերի և աղբի տեղափոխման երթուղիներ	Շինհրապարակ տանող ճանապարհների ստուգում	Աշխատանքային ժամերին և դրանցից դուրս անսպասելի ստուգումների իրականացում	Կապալառու
Շինարարական տեխնիկայի շահագործում տեղամասում	- Մեքենաների և տեխնիկայի լվացումը պետք է կատարվի շինհրապարակից դուրս , համայնքում գործող մասնագիտացված կետերում - Տեխնիկական միջոցների վառելիքի լիցքավորումը և յուղումը պետք է իրականացվի շինհրապարակից դուրս լցակայաններում կամ սպասարկման կետերում	Շինհրապարակ	Գործընթացների գործունեության ստուգում	Մեխանիզմների շահագործման ընթացքում	Կապալառու
Հողային աշխատանքներ	- Հանված հողերը հեռացվում են համայնքի կողմից հատկացված վայր	Շինհրապարակ	Գործընթացների ստուգում	Հողային աշխատանքների ընթացքում	Կապալառու

Իներտ շինանյութերի գնում	- Շինանյութերի գնում վստահելի մատակարարներից	Իներտ նյութերի պահեստ	Փաստաթղթերի ստուգում Գործընթացների ստուգում	Մատակարարման ընթացքում	Կապալառու, մատակարար
Կենցաղային աղբի առաջացում	- Աղբամանների տեղադրում շինարարական հրապարակում - համայնքի թույլտվություն աղբի մշտական տեղակայման վերաբերյալ	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ողջ ընթացքում	Կապալառու, քաղաքապետարանի վերահսկողություն
Աշխատանքի անվտանգություն	- Անձնակազմի ապահովում արտահագուստով և անձնական պաշտպանիչ միջոցներով - Շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանություն	Շինհրապարակ	Ստուգման գործընթացներ	Աշխատանքների ողջ ընթացքում	Կապալառու, պատվիրատու
Վտանգավոր նյութերի և թափոնների կառավարում	վառելիքի, յուղերի և այլ թունավոր նյութերի պատահական կամ մշտապես տեղի ունեցող արտահոսքեր	Շինհրապարակ	Արտաքին զննում	Շինարարության ընթացքում	Կապալառու,

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մթնոլորտային արտանետումների գույքագրման ձեռնարկ, ЕМЕР/ЕЕА, 2009:
2. СН 245-71. Санитарные нормы проектирования промышленных предприятий.
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. СНиП 2.04.02-84. Водоснабжение. Наружные сети и сооружения.
5. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами, Госкомгидромет, Ленинград, 1986.
6. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям, ОНД-84-Н.
7. Укрупненные нормы водопотребления и водоотведения для различных отраслей промышленности, Стройиздат, Москва, 1982г.
8. Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР, Москва 1984г.
9. Нормы расхода топлив и смазочных материалов на автомобильном транспорте.
10. Нормы расхода жидкого топлива для машин, эксплуатирующихся в предприятиях уборки городских территорий, санитарной очистки и ремонтно-строительном производстве.
11. "Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին" ՀՀ օրենքը, ընդունված 2006 թվականի դեկտեմբերի 20-ին:
12. ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի "նախաձայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին" թիվ 160-Ն որոշում:

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ